



ԻՐԱՎՈՒՆԿ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ
ԿՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻ ԱՄԵՆ ՉՈՐԵՖԵՍԱԲԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ

Rev. Pere G. Kalemkarian Mechitaristengasi
№ 4 Vienne

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
Ներկայ 1898 թվականի
Պուլխարիոյ համար տարեկան 12 գրանի
» » վեցամսեայ 6 »
Արտասահմանի » տարեկան 14 »
» » վեցամսեայ 7 »
ԿԱՆՆԻՒՆ ՎՃԱՐՆԵԼԻ

Համայն դրամ եղային զի կել հետեւեալ հասցեով
ԽՍՐԱԳՐՈՒԹԻՒՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ
Редакция на вѣстникъ
„Иравункъ“
ВАРНА (България).

ՀՐԱՏ ՎԱՌՆԱ (ՊՈՒԼԿԱՐԻԱ)
Rédaction du journal
„Iravounk“
VARNA (Bulgarie)

Խմբագրութեան ուղղեալ գրութիւնք
էս չեն զրկուիր եւ յարմար դասուած-
մէջ միայն կը հրատարակուին անբող-
ջովիս կամ մասամբ:
Ծանուցման տողը 20 սանթիմ. երե-
փեւ աւելի անգամներու համար 20 0/0
գեղջ կը լինի, փոխարեւը կանխիկ:

ԻՆՉ Կ'ԸՆԵՆ

ՄԵՐ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԸ

Այո՛, ի՜նչ կ'ընեն մեր զարգաց-
եալ երիտասարդները:

Ամեն ազգ իւր աւելց ուժովը
իր երիտասարդներովը պարծելու
և անոնցմէ իր ապագան սպասելու
իրաւունքը ունի:

Մենք մերթ մեր ազգի կողմե-
րը սրբագրելու կոչում ըրած ա-
տենինս ստեպ ամենէ աւելի քննա-
դատելին կը գտնենք կղերը և կը
սկսինք տէրտէրները ու վարդա-
պետները ձաղկել և կը կարծենք
անոնցմէ ամեն բան սպասելու ի-
րաւունք ունենալ. կըսենք մեր
կղերականները ապիկար են, ծակ-
աչք են, անհոգ են և այլն և այլն.
Բայց երբ հարցնենք թէ, ո՞ր ազգ
միայն իւր կղերով փրկուած է, և
ո՞ր ազգի կղերը հայրենիքի փրկ-
կութեան բաժնիրան եղած է. այս
հարցումներուն հաստատական պա-
տասխան տալու օրինակ մը չենք
կարող գտնել. որ ժողովուրդի և
որ ազգի մէջ ալ փնտռել կ'լսենք
կղերը եթէ ոչ յետադիմութեան
մարմնացում մը, գոնէ դէպի յա-
ռաջադիմութիւն ալ կարեւոր ազ-
դակ մը չէ եղած: Ուստի Հայերու
ալ մեր կղերականներէն շատ բան
ակնկալելու յուսախաբուութեան
պէտք չէ մատնուինք:

Գալով մեր հարուստ ու ջոջ դա-
սակարգին. արդէն ասոնք ամեն
խնդրոյ և ամեն առարկայի վրայ
իրենց շահագիտական ակնոցով նա-
յի վարժուած լինելով, սովորա-
բար ժամանակ ալ չեն ունենար
հանրային յառաջադիմութեան և
զարգացման միջոցներու վրայ խոր-
հելու, գործադրելու և հանրային
բայերու կարապետողներ ըլլալու:
Բայց և այնպէս, այս տարրը, հա-
րուստը կամ վաճառականը, հան-
րային յառաջադիմութեան համար
բնաւ արհամարհելի և անկարեւոր
տարր մը պէտք չէ նկատել. ընդ-
հակառակը, մանաւանդ մեր մէջ,
այդ խղիւղ տարրը ամեն հանրա-
յին ձեռնարկութեանց մէջ իւր բա-
ժինն կամ մասնակցութիւնը ու-
նենալու է. բայց ինչպէս ըսինք,

նա ինքնաբերաբար չէ կարող հան-
րային գործունէութեան հոսանք
մը ստեղծել և կամ սկսուած հո-
սանքի մը առաջապահը ըլլալ. այլ
նա գործուելու և ազդուելու է ե-
րիտասարդ ուժերէ:

Այո՛, երիտասարդները, զար-
գացեալ երիտասարդները նախա-
ձեռնարկ պէտք է ըլլան հանրային
կամ ազգային ամեն յառաջադի-
մական գործերու մէջ. ասոնք պէտք
է գաղափարն յղանալ, խորհիւն,
միջոցներու. ընտրութիւնը ընեն և
ի հարկին իրենց զօրավիգ և թի-
կունք ընտրեն վաճառական և դը-
րամատէր դասն, գիտնան սիրա-
շահիկ անոնց համակրանքն և յո-
գուտ հանրային ձեռնարկութեանց
շահագործին անոնց նիւթական ա-
ռաւելութիւնը ու ազդեցութիւնը:

Բայց ի՜նչ կ'ընեն մեր զարգաց-
եալ երիտասարդները: Անոնք մեծ
գործերու վրայ կը մտածեն. կը
խորհին մեծ բաներ ընել. սակայն
մեծ ձեռնարկութեանց յաջողու-
թեան համար ալ մեծագոյն ար-
գելքներու կը հանդիպին. պզտիկ
գործերու ալ չեն ուզիր ձեռնար-
կել, հետեւաբար ծախսատիր կը
նստին անփոյթ և անհոգ: Այո՛,
ի՜նչ կարելի է ալ իրենցմէ սպա-
սել. նոքա մեծ գործին յառաջա-
պահները պիտ' ըլլան եթէ առիթը
ներէ, բայց որովհետեւ այդ բարե-
պատեհ առիթը ներկայիս կը պակ-
սի, պարտաւոր են անգործ սպա-
սել Մեսիայի գալստեան, իրեւ-
թէ տարբեր կերպով գործելու և
կամ ազգին ու տեղական ժողո-
վրդեան օգտակար ըլլալու ուրիշ
գործեր կամ պէտքեր մէջտեղ չըլ-
լային: Ազգային այդ զարգացեալ
և թարմ ուժը կազմող երիտասար-
դութիւնը չի նշմարուիր բնաւ
ժողովրդական խաւերուն մէջ, նա
շատ շատ կերեւայ հասարակաց
պարտեզներու, գարնջրատուններու,
պարահանդէսներու և այլ զրօսա-
փայերու մէջ. այդ տեղերը նա
չափէն աւելի զուարթ, շիկ ու զը-
ւարճաբան է. այդ զրօսափայեր-
ուն մէջ նա ամբողջ օրեր ամբողջ
գիշերներ կանցնէ առանց ձանձ-
րութի և առանց կարեւոր գործեր
ունենալը յիշելու:

Գոնէ անգամ մը չի դարձներ
աչքը և չի գիտեր իւր բնական
երկրի կամ քաղաքի ազգայնոց որ-
չափ նիւթական այնչափ և աւելի
բարոյական և մտաւոր տխուր վի-
ճակը: Ամեն առթիւ երբ խօսքը
կուգայ ազգասիրութեան և հայ-
րենասիրութեան վրայ, մեր զար-
գացեալ երիտասարդները այս ուղի-
րական զգացումներն բնաւ ուրիշ
դասակարգի մը չեն հաճիր տալ,
միայն իրենք են ազգասէր, իրենք
հայրենասէր, իրենք հասարակաց
կամ ազգային գործիչներ, իրենք
իրենք և միշտ իրենք:

Բայց երբ հարցնեն թէ ի՜նչ կը-
նէք դուք, նոյն իսկ ձեր բնակա-
փայրին մէջ գտնուող հարիւրաւոր
գիւղացի մեր դժբաղդ ու տգէտ
կղբայրներուն. անոնց մտաւոր զար-
գացմանը նպաստող ի՜նչ ձեռնար-
կութեանց մէջ կը գտնուիք. այս-
պիսիներուն եթէ ոչ ուրիշ բան
գէթ պարզ ընթերցանութեան,
ազգ. պատմութեան և այլ անհը-
րաժեշտ եղած կիրակնօրեայ գա-
սեր աւանդելու բարեհաճութիւնը
գոնէ ունեցած էք:

Վերջին 2-3 տարւոյ ընթացքին
մէջ, մեր գաւառացի դժբաղդ և
անգաստիարակ եղբայրներէն հա-
զարաւորներ ազատ Պուլխարիա
եկան և այժմ հարիւրաւորներ ետ
կը դառնան միեւնոյն վիճակի մէջ.
գիտցա՞ք, զարգացեալ բարեկամ-
ներ, երկրին ազատութենէն օգ-
տուելով, պատրաստել անոնց միտ-
քերն ու զգացումներն. տեղական
վարժարանաց յառաջդիմութեան
մասին ի՜նչ կարեւոր գեր կատա-
րեցիք. ձեռնարկեցիք ո՛ր և է ազ-
գային նոր հաստատութիւններու,
կամ եթէ երբէք ձեռնարկողներ
եղան բարեհաճեցա՞ք անոնց աջակ-
ցել, գործը յառաջացնել և միա-
յուն ընել:

Այս բոլոր հարցումներուն պա-
տասխան խոշոր Ո՛Չ մը կայ:

Ուրեմն մեր զարգացեալ երի-
տասարդները իրենց անգործու-
թեան մէջ ի՜նչ բանով ազգասէր
և հայրենասէր կրնան անուանուիլ:

Բ. Գ.

ԱՒՍՏՐԻՈՅ ԿՍՅՍՐԸ

ՄԻԻԹԱՐԵԱՆ ՏՊԱՐԱՆԸ

Վիեննայի ցուցահանդէսին մէջ
հայ արուեստն ալ իւր բաժինն ու-
նեցած է:

Ցուցահանդէսին «ապարանք
կրթութեան» բաժնին մէջ մի ա-
մենակարեւոր տեղ կը գրաւէին
Վիեննայի Միւսիթարեան հարց տը-
պարանի կողմէ իր ցոյց դրուած ա-
ռարկաներն: Ֆրանց Եօզէֆ կայս-
րը օգոստ. 30 ին բարեհաճեցաւ
այցելել Միւսիթարեան տպարանի
հայկական ճարտարապետութեան
և մանրանկարչութեան կանոնաց
համեմատ շինուած հսկայ և սի-
րուն պահարանը:

Հոն կայսեր և Միւսիթարեան
հարց միջեւ տեղի ունեցած հետեւ-
եալ խօսակցութիւնը կը քաղենք
Հակոբէ Աւստրիայի թիւ 10, 11 էն.

«Ձեր տպարանը շատ լեզուներ
ներով գործեր կը տպագրուին,
այնպէս չէ՞»:

«Այո՛, վեհափառ Տէր, պա-
տասխանեց տպարանապետը, 50.60
լեզուաւ կը տպագրենք»:

«Անշուշտ Արեւելք պէսպէս լե-
զուներ կան»:

Տպարանապետը ցոյց տուաւ պա-
հարանին ճակատին կողմը դրուած
հայերէն գրքերէն՝ Պատարագա-
մատոյց, Ժամագիրք, Մաշտոց են.
որոնք ապակոյ տակ բաց դրուած
էին:

«Ասոնք շարունակն անշուշտ չեն
հասկնար բնաւ հայերէն»:

«Ոչ, վեհափառ Տէր, աշխա-
տողները աւստրիացի են, բայց
անսխալ կը կարդան և կը շարեն»:

Տպարանապետը ցոյց տուաւ հա-
յերէն մեծ երկրագունդն (60 սան-
տիմետր տրամագծով), և ըսաւ.
որ նոյնը գծագրած է 1845-1848 ին
մեր Գեր. Արքահայրն (Այստեան
Արքէն Արքեպիսկոպոս): Նորին
վեհափառութիւնն «իրօք» հար-
ցուց, և դարձաւ Գեր. Արքահօր
«կը շնորհաւորեմ, ըսաւ, շատ
գեղեցիկ գործ է» Գեր. Արքա-
հայրը պատասխանեց «Երիտասար.
գութեանս ժամանակի մէկ երկն է»
Նորին վեհափառութիւնը տես.

նեղով Միտրանութեան մատենա-
դարանի հայերէն ձեռագիրներու
ցուցակին մանրակարգ պատկերնե-
րը, հարցուց .

«Ասոնք ճիշդ սկզբնականներուն
համեմատ են :»

«Այո՛, վեհափառ տէր, պա-
տասխանեց տպարանագետը, բը-
նագիրները լուսանկարուած են և
այս կաղապարներու վրայէն իւրա-
քանչիւր գոյնը տպուած է :»

«Շատ գեղեցիկ, շատ գեղեցիկ :»

Նորին վեհափառութիւնը դառ-
նալով պահարանին երկրորդ երեսը,
ուր ապակոյ տակ դրուած էին
լատին եկեղեցւոյ պէտք եղած ե-
կեղեցական ամեն գրքեր, զորոնք
միաբանութիւնս 1825 էն ի վեր իւր
ծախքով հրատարակած է, և ո-
րոնցմէ շատերը 3—4 անգամ տը-
պագրուած են, «Ասոնք ամենը
լատիներէն են, այսպէս գեղեցիկ
Պատարագամատոյցներ ալ կը տը-
պագրէք» ըսաւ :

«Այո՛, վեհափառ Տէր, ամ-
բող Սուտրիոյ-Հունգարիոյ մէջ
մեր Միտրանութիւնը մի միակն է՝
որ լատին եկեղեցւոյ պէտք եղած
ամեն եկեղեցական գրքերն իւր
սեպհական հրատարակութեանը
կը տպագրէ :»

«Այսպէ՛ս, այն ատեն ձեր տը-
պարները շատ աշխատաւոր պիտի
ըլլայ, և այս հրատարակութիւն-
ները բաւական եկամուտ մը պի-
տի բերեն ձեզ :»

«Այո՛, վեհափառ Տէր, մեր
տպարանը 80—90 աշխատաւոր
անընդհատ կը գործեն :»

«Շատ գեղեցիկ, շատ գեղեցիկ :»

Ն. վեհափառութիւնը պահա-
րանին երրորդ և չորրորդ երես-
ները դրուած առարկաներն ալ
գիտեց . վերատեսուէ Պր. Կ. Սիտ-
տէ կայսեր մեկնեց թէ պահարա-
նին ոճը հին Հայաստանի Անի
մայրաքաղաքին ճարտարապետա-

կան ձեւերուն վրայէն առնուած է,
իսկ նկարչութիւնը ԺԴ. ԺԶ. դա-
րու հայկական ձեռագիրներու
մանրանկարներուն համեմատ է :

Նորին վեհափառութիւնը հար-
ցուց, «Այս քաղաքը տակաւին
ի գոյութեան է :» Ոչ, վեհա-
փառ Տէր, պատասխանեց վերա-
տեսուէր, վերջին տեղամ ԺԴ. դա-
րուն սկիզբները թաթարաց ձե-
ծօք բոլորովին կործանեցաւ, և
այժմ ունինք միայն այդ հրաշալի
շինուածներուն աւերակները :»

Կայսեր այս այցելութիւնը քա-
ռորդ ժամէն աւելի տեւեց և իր
խօսակիցներուն գլխով շնորհակա-
լութիւն յայտնելով մեկնեցաւ : Ն.
վեհափառութիւնը վիէննայի տը-
պարաններէն և ոչ մէկունը միայն
չափ երկար կեցաւ և ոչ ալ ունէ
մէկ տպարանագետի հետ խօսե-
ցաւ :

ՐԱՅՅԻՆԻ ՄԱՆՈՒՄԵՆԻ

Մեծանուն հայ վիպասան Բաթ-
ֆիի գերեզմանին վրայ արձան մը
կանգնեցնելու Յանձնաժողով կազ-
մուած էր Բաթֆիի մահէն գրեթէ
անմիջապէս վերջ 1888ին : Յանձ-
նաժողովը նոյն տարին հանգանա-
կութեան ձեռնարկած ըլլալով գո-
յացուցած էր 1019 թուականի և զայն
դրամատան մը յանձնած :

Այժմ Ռուսահայ թերթերու մէջ
կը կարդանք նոյն Յանձնաժողով-
ին վերջերս հրատարակած մէկ
տեղեկագիրը, որ ցոյց կուտայ թէ
յիշեալ գումարին վրայ տոկոսն ալ
աւելցնելով հասած է 1335 թուականի
87 դարեկի : Մահարձանը՝ որ եռ-
թիւ արշին բարձրութիւն ունեցող
մարմարեայ սիւն մ'է զարդարուած
հայկական դանդաղներով, այժմ
պատրաստ է, բայց անոր շուրջ
թեթեւ վանդակապատ մը շինելու
համար 400 թուական եւս պէտք ըլ-
լալ կը շնչուի :

Տիրէթթորութեան վերջը, յաջորդեց
հիւպատոսութիւնը իր զանազան մա-
սերով, յետոյ միապետութիւնը, Ներո-
պայի մէջ թագաւոր թագաւորի վրայ
կ'ելլէր, մէկ կուսակցութիւնը միւսին
վրայ կը յարձակէր եւ աւարառութիւնը
ամենէն քաջ տիրապետողին էր :

Ընդհանուր խաղաղութիւնը վերա-
հաստատուելէն քիչ յետոյ մեր Տօթթէօն
Ս. ուր մեր պատմութեան դէպքէն
քանի մը տարի վերջը իր հայրենիքը
Գերմանիա վերադարձած էր, Հերթզ-
եան պալատին մէջ Վ. ընտանեաց քով,
որ ժառանգական իշխանուհի էր (մի
Ռուսական մեծ-իշխանուհի) բժշկապե-
տութեան պաշտօն առնելով, ընկերա-
ցաւ անոր մինչեւ Բեթերսպոլի :

Տօթթէօն Ս. հազիւ քանի մը օր էր
որ կայսերական քաղաքը եկած էր, օր
մը չընթացաւ թեան ելաւ Բեթերսպոլի-
կի գլխաւոր փողոցներուն մէկուն մէջ,
Այս չընթացաւ թեան միջոցին, ճիշդ
ճաշի ժամանակ ականատես կ'ըլլար պա-
տահարի մը, որ թէպէտեւ ըստ ինքեան
սոսկալի, բայց Բեթերսպոլիի մէջ այս
տեսակ պատահարներ արտակարգ բան
մը չէին : Հոն կառապանները եթէ չը-
սեմ յիմարտէն գէթ անխոհմտաբար կը
վարեն իրենց կառքերը, Նշանաւոր
անձ մը որ անձամբ կը վարէր իր գեղե-
ցիկ կառքը, դարձնելու աշխատած մի-

Յանձնաժողովը տեղեկագրին
մէջ նուիրատուաց անունները մի
առ մի յիշելով կը յաւելու «Դըթ-
ուար է հաւատալ, բայց փաստ է,
որ Թիֆլիս, Բագու (բացի եղբ.
Աբէլհաններէն), Երեւան, Ալեք-
սանտրոպոլ, Ախալցխա, Գանձակ
ոչ մի կողմէ չեն նուիրել Բաթֆիի
մահարձանի համար . . . »

Ընթերցողը, հաւատաւոր թիֆ-
լիսցիներուն այսքան ժաշտ լինե-
լուն : Ահա, փաստը մէջտեղ է :

ՕԳՆԵՆՔ ՏԱՌԱՊԵԱԼՆԵՐՈՒՆ

Բնութիւնը իր տխուր եղանա-
կին մէջ մտաւ և երկինք իր մառ
տեսարանները սկսաւ պարզել :
Ասկէց վերջ պիտի լսուի միայն
հիւսիսային ցուրտ քամիին չչիւնը,
որ պիտի սառեցնէ ծառն ու ծա-
ղիկը, հողն ու ջուրը, բանական
ու անբանը և զգացնել տայ թէ
ալ վերջացած են բնութեան գե-
ղաթոյր տեսարաններն ու հմայքը :
Դեռ եւս այս ու այն կողմ տես-
նուած գունատ կանաչները աւելի
կը շեշտեն բնութեան ոգեւորը,
և իմաց կուտան քրտնաթոր, բազ-
մաշարժար մարդուն թէ մօտ են
ցրտասարսուռ օրերը, թէ արդէն
հասած են ճգնաժամի եղանակները :
Տաքուկ, հաստ վերարկներու
մէջ փաթթուած անցորդներ շտա-
խելով կանցնին փողոցէն և ամենա-
խեղճ մուրացիկն իսկ վերջապէս
գտած է իր ցնցոտիները կրկնա-
պատկելու, և ցուրտէն պաշտպան-
ուելու միջոցը : Տուններու փեղկեր
ամբողջաբար և մէն մի անհատ իր
«Ես»ը կամ իւրայինները հոգալու
վրայ է :

Բայց այս ընդհանուր իրարան-
ցումին ու ինքնապաշտպան կան-
խահոգութեան մէջ, արդեօք

ջոցին կառքը չըլլելով վար ինկաւ եւ
գետնին վրայ մնաց, կառապանը թիթե-
վէրք մը ստացաւ, բայց տէրը անանկ
ձախորդ կերպով զարնուեցաւ որ մա-
րած մնաց այնտեղ եւ քով խոռոչով
մարդիկները չէին կրնար հասկնալ թէ
ողջ է թէ մեռած :

Տօթթէօն Ս. փութաց արկածին վայ-
րը, ճեղքեց բազմութիւնը, ներկայա-
ցուց ինքզինքը որ բժիշկ է եւ ջանաց
արկածեալը իր տունը փոխադրել տա-
լու, կը հարցունէր թէ ո՞վ է այս խեղճ
մարդը որ գետնի վրայ նուազած կը
պառկէր : Վերջապէս տեղեկացաւ որ
բնակարանը շատ մօտիկ է եւ կոմս
Ռոզանով անունով ճանչցուած :

Տօթթէօն Ս. ընկերացաւ կոմսին
մինչեւ տունը, պէտք եղած դարման-
ները տալու համար : Կոմսը անզգայ
վիճակի մէջ կը պառկէր, Տօթթէօնը
տեղափոխեց զայն սենեակի մէջ, հան-
ուեցնելով քննեց վէրքերը, կապեց եւ
հրահանգ տուաւ որ ամենքն ալ դուրս
ելլելով հիւանդը հանգիստ թողուն :
Հրամանը վայրկենապէս կատարուեցաւ,
բայց զինքը զարմացնողը այն էր որ
խեղճ մարդուն կիներ տակաւին երեւան
եկած չէր : Հարց ու փորձ ըրաւ եւ ի-
մացաւ որ պոռոյտի գացած էր եւ ժամ
մը ետքը պիտի վերադառնար : Ասոր
վրայ որոշեց սպասել մինչեւ որ տիկինը

մտածողներ կա՛ն թէ քիչ մը հե-
ռուն մեր Հայրենիքի մէջ ալ նոյն
ցուրտը և բռնաշունչ քամիները
տակաւ սաստկանալու վրայ են,
թէ բազմաթիւ որբեր և տառապ-
եալներ կան հոն, զուրկ հայրենի
յարկէ, լոյսէ ու կրակէ : Թէ պը-
տուղներ և կանաչներ վերջացած
են ալ, և թէ այժմ կը գտնուին
անոնք դաժան բնութեան մը հան-
դէպ մերկ, նոթի ու բոկոտն :
Վաշկատուն Քուրդը և դաժան
Թիւրքը դարձեալ կապտած են իր
ձեռքէն վերջին հացի բեկորն և
ցնցոտիներու վերջին ծուէնը, ձը-
գելով զայն անյուսուածեան ալե-
ծուփ լճակին մէջ, ուր շանաձու-
կեր կը յաճին և սոսկալի մահ մը
կը սպսուան :

Երբ Գերմանացի կամ Անգլի-
ացի միսիօնարը կը մտածէ Հայ
որդին և Հայ տնանկին վրայ, երբ
իր քայլերը կուղղէ մինչև Միջա-
գետքի խորերը, ո՞վ զիտէ ի՛նչ
հեռատես մտքով և թաքուն նպա-
տակներով, արդեօք Պուլկարոսայն
ալ պարտական չէ՞ մտածել իր
բազմակարգ և բազմաշարժար եղ-
բայրներուն վրայ, ցորչափ Հայ
անունը կը կրէ և Հայ կ'ապրի :

Ժամանակէ մը հետէ եթէ մենք
սկսած ենք յիշատիւթեան չօգ-
նել ունէ առարկութիւններով և
քննադատութիւններով զոնէ օգ-
տակար հանգիստանանք մեր նման
ներուն, մեր արեւակիցներուն :
Արդեօք կարելի չէ՞ր Պուլկարա-
հային ալ միացեալ ուժերով մի
քանի Հայ որբեր որդեգրելու բարի
գործը ստանձնել, լոկ մարդասի-
րական զգացումներով տոգորեալ,
ձգնէք ազգասիրութիւնը և այդու
կատարէք դոյզն ծառայութիւն մը
ազգին անճրկած և անդամատուած
շառաւիղներուն, որոնց ձայնը ի
լուր աշխարհի տարածուեցաւ :

Մ. Գնթրուհի

ԶՈՀՈՒՍԾ ԶԵՌՔԸ

(Թարգմանութիւն պուլկարեհեհե)
(4)

Երիտասարդ բժիշկը, գիշերուան մը-
նացած մասը շատ անհանգիստ անցուց,
Հետեւեալ օրը աշխատեցաւ գէթ տանը
փողոցը գտնալու, բայց չյաջողեցաւ,
ինչպէս նաեւ յաջորդ օրերուն մէջ ըրած
բոլոր խուզարկութիւնները պարապը
եղան Շաքաթներ անցան, Տօթթէօնը
վերջապէս հասկցաւ թէ, դարտնիք մը
կայ այստեղ, որուն ծայրը ամենեւին
չպիտի կրնայ գտնել : Բաւական ժա-
մանակ մտքէն չելաւ այն գիշերուան
դէպքը, բոլոր անցած դարձածը երազի
պէս կուգար իրեն : Վերջապէս տակաւ
սկսաւ ամեն բան մոռնալ, այնպէս որ
ամենեւին այլեւս չէր յիշեր անցեալը :

Տարիներ անցան, այնպիսի տարիներ,
որոնք պատմութեան մէջ արեւան հետ-
քեր թողուցին : Պատերազմը կը սար-
սափեցնէր ամբողջ Եւրոպան : Պօնա-
քարը որ յեղափոխութիւնը ծնած էր,
իր երկաթեայ ոտքերուն տակը նստեց
այլըր, որ անուցած էր զինքը հռչակա-
ւոր մարմը ըլլալու համար, եւ անոր
Եւրոպայի աշխարհի կէսը : Ֆրանսայի

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆ

(Շար. նախ. թիւնք եւ վերջ)

Յիշխալ, 28 սեպտ.

Գրասիրաց Եղբայրութիւնը, իր մեծակալան թմբուկներէն սթափելու զուր ճիգեր կ'ընէ. Անցեալ հինգշաբթի գիշեր Ընդհ. ժողով գումարուեցաւ նոր վարչութիւն մը ընտրելու համար, որովհետեւ նախորդ վարչութիւնը անփորձ պատանինքէ բաղկացած՝ Եղբայրութեան վերջին վարկն ալ կոտորած էր:

Մեր գաղափարն այն է թէ որքան Եղբայրութիւնը անփոփոխելի կը պահէ իր կանոնադրին մէկ քանի անհեթեթութիւնները, այդ ընկերութիւնը չը կրնար սպասուած օգուտը ընծանել ազգին: Կուգեմ անկարելի կանոնադրին այն յօդուածը որ կը պահանջէ ընկերութեան եկամուտին 0/0 60 ը պահել ապագային չէնք մը կառուցանելու համար: Բաղձանքը ինքնին լաւ է, բայց միջոցը անյարմար: Ընկերութիւն մը որ հիմնուած է ազգին մէջ ընթերցասիրութիւն եւ զարգացում տարածելու համար եւ որ այդ նպատակով ժողովուրդէն ամսական վճարումներ կը պահանջէ, պէտք է գործածէ զանոնք ժողովուրդին անմիջական պէտքերուն: Հիմա է որ ժողովուրդը ընթերցումի եւ զարգացումի պէտք ունի առանց որուն իր գոյութիւնն իսկ վտանգի տակ է: Արդ արհամարհել այդ պէտքը, տեղեւոյս անուս թողուլ ներկայ սերունդը ապագան զարգացնելու համար (եւ այդ ալ չէնք մը գնելով) կը նմանի մեր երբեմնի հոգաբարձուներուն այն դրութեան, որոնք վարձարանին ծախքերէն անգին զեղչեր կը կատարէին ստակ հաւաքելու եւ կալուած գնելու համար, «որպէսզի վարձարանին ապագայ նիւթականը ապահովուի»: Բայց չենք խորհիր թէ ապագային վրայ մը տաժելով ներկային մեծ զրկանք մը կ'ընենք: Գրասիրաց Եղբայրութիւնը իր 14 տարուան գոյութենէն ի վեր այդ նպատակին համար ստակ դրած է պանդան եւ ամիսը կէս լէվով դեռ 14 տարի ստակ հաւաքելու է չէնք մը գնել կարողանալու համար: Բայց այդ 30 տարուան ընթացքին մէջ ամբողջ սե-

ծամանակ ծննդի վրայ գալով մահաճակատին քովը, երեսը ծածկեց վարագոյրներուն ետին: Մէկ մ'ալ յանկարծ նորէն ոտքի ելլելով աչքերուն հանդիպեցաւ Տօքթօնը եւ բարկութեամբ հարցուց:

— Ո՞վ էք դուք եւ ինչպէս եկած էք հոս:

— Թիւիլ եմ, բարեսիրտ տիկին, այն վայրկեանին երբ պարոն կոմսը վտանգաւոր կերպով ինկաւ փողոցին մէջ եւ ալ պատահմամբ հոն գտնուեցայ, շուտ մը վազեցի իրեն օգնելու համար եւ ընկերացայ մինչեւ հոս որ...

Յանկարծ Տօքթօնը սարսուռ մը զգաց ու խօսքը կտրեց, նոյնպէս եղաւ կոմսուհին ալ, որուն աչքերը զէպի այս վերջնոյն երեսը ուղղուեցան, ուր մոզական գրուած մը կարդալու կը ջանար:

— Ո՞վ էք դուք, ըսաւ կոմսուհին, լռութիւնը խզելով եւ մոռնալով որ անգամ մը ըրած էր այս հարցումը եւ պատասխանը ընդունած: Բայց թիւրեւս միեւնոյն հարցումը նորէն կ'ընէր ուրիշ մտքով, ինչպէս որ հարցման ձեւն ալ ուրիշ էր: Մինչեւ այն ատեն խօսակցութիւնը ֆունսներէն կ'ըլլար, բայց յետոյ գերմաներէնի փոխեց, իբր թէ անհրաժեշտ ըլլար այս լեզուն, Տօքթօնն ալ միեւնոյն լեզուով պատասխանեց:

րունդ մըն է որ պիտի փճանայ ազգային զգացումները վառ պահող միջավայր մը չի գտնելով: Ու ի՞նչ օգտակարութիւն կրնան ունենալ կառուցողները չէնք երբ երբ ազգային զգացում մը օտար տարրերու յարճուան շփումին ազդեցութեամբ խեղդուած է սերունդին մէջ: Օրինակ Ռուսահայ փառաւոր եկեղեցիները եւ քարաշէն դպրոցները որոնք հրեայ աղաքներով լցուած են մինչեւ երեկոյ: Գրասիրաց Եղբայրութիւնը քանի որ տարիներով պանդանքը ստակ պահելու դիտաւորութիւնն ունի, մենք կ'առաջարկենք փոխել իր անունը եւ Շահասիրաց Եղբայրութիւն կոչել, թիւրեւս այն ատեն արդարացում մը ունենայ ժողովրդին առջեւ:

Այս մասին գովելի է «Հայկական Ընթերցարան»ի ուղղութիւնը: Բազմաթիւ քաղաքներէն ալ երկու ընկերութեանց կանոնադրերը. «Ընկերութիւն» կըսէ Հայկական Ընթերցարանի կանոնադրերը, որ եւ չափազանցական ձգտումներ չունենալուն, իր բոլոր եկամուտը կը գործածէ իր նպատակի յարմար գնումներու եւ զանապետին քով առաւելելու 100 ֆրանք կրնայ մնալ իբր պահեստի գումար»: Ահա ընկերութիւն մը որ ճշմարտագէտ օգտակար ըլլալու կոչուած է, եւ ժողովուրդը արդէն ըսկըսած է համակրել ու գնահատել զայն: Մէկ ամսուան շրջանի մը մէջ հաւասար թուով անդամակիցներ գտած է եւ բաւական ճոխ թերթերով ընթերցարան մը ունի: Գիշերային վարժարանը անձնուէր դասախօսներու ձեռքով, սկսած է լոյս տարածել հայ գաւառացի եղբայրներու մէջ որոնք ջերմ փափաքով եւ դպրոցական ճշդապահութեամբ կուգան իրենց դասերը մտիկ ընելու: Ընկերութիւն մը որ ազգին աջակցութեան կը դիմէ պէտք է անոր անմիջական պէտքերուն համար աշխատի եւ ոչ թէ պանդանքը դրամ աւելցնէ: Այդ պարագային անհատ մըն ալ կրնայ խնայողական սնտուկները 1-2 լէվ ձգելով զրամազուտի մը կազմել որ ուղակի գէթ իր անձին օգտակարութիւն մը կ'ունենայ:

— Ես գերմանացի բժիշկ մ'եմ եւ ընկերացած եմ Մեծ-Իշխանուհիին, որ ժառանգական իշխանուհի է Վ. ի, բարեբաղդ եմ որ պատենութիւն ունեցայ օգնութեան փութալու պարոն կոմսին, ամոքելու համար իր նախնական ցաւերը:

— Պիտի կրնայ արդեօք ոտք ելլալ — կը հարցնէր կինը իրարու վրայ, եւ կոմսին անուշը յիշուելուն պէս մտախոհութեան մէջ ինկաւ, բայց Տօքթօնին նայուածքէն սթափելով հիւանդին դարձաւ: Զարմանալին այն էր որ փոխանակ հարցնելու թէ արդեօք պիտի ապրի: Բոլորովին ուրիշ տեսակ հարցում մը կ'ընէր:

— Որչափ որ կը հասկնամ եւ կրնամ բան մը հետեւցնել, այս տեսակ հարցում մը անտեղի կը գտնեմ —, աւելցուց Տօքթօնը, — ուղեղային վերահաս տագնապ մըն է, որ վայրկեանական նուաղում մը պատճառած է հիւանդին, բայց շուտով պիտի անցնի, այս մասին շատ անհանգիստ մի ըլլաք բարեսիրտ տիկին:

— Արդեօք կ'ընենք պիտի մնայ — կրկնեց դարձաւ ինկնուած ձայնով մը որ կարծես թէ գերեզմանի խորէն կուգար:

— Այդ տեսակ բանի մը համար վախ մի բերէք բնաւ բարեսիրտ կոմսուհի, անհոգ եղիք, կ'երեւայ թէ շատ վախցած էք:

ԼՐԱՔԱՂ

— Գեր. Արսէն վ. վիհուհի այս օրերս վիճենա կը գտնուի եւ հոն հայկական մատուռ մը կանգնելու խնդիրը կը յուզէ եղեր:

— Գուրտպէլինի ծանօթ խնդրով կաթողիկ եղող Ամրակում վարդապետ նոյն վիճակի Հռովմէական Հայոց առաջնորդ անուանուած է:

— Գաւառներու զանազան տառաջնորդներէ կարօտութեանց նըկատմամբ Պատրիարքարան եկած գրերը Քաղ. Ժողովը ուշադրութեան առնելով, որոշեց է խնդրը կառավարութեան ներկայացնել:

— Քաղ. Ժողովը տեղեկանալով գաւառական կարօտ վարժարանաց խնամակալութեան յայտագրէն որ առձեռն հասոյթը չեն բաւեր նոյն իսկ ամենէն կարօտ տեղերու մէջ վարժարանները բաց պահելու, տնօրինութիւնները ըրեր է այդ պէտքը հոգացուելու համար:

— Բիւզանդիոնի մէջ կը կարգանք թէ Աղգ. Հիւանդանոցի յիմարներու յարկին մէջ թոքախտն հսկայաքաղ յառաջագիւծ է. խեղճերուն կէսէն աւելին վարակուած է եւ հոգաբարձութիւնը արմատական միջոցներ կը խորհի եղեր:

Ռուսահայ քերթեր:

Ս. Էջմիածնէց. — Սեպտ. 12-ին, շաբաթ երկուշիան, վեհափառ կաթողիկոսը վերադարձաւ Ս. Էջմիածին իւր երկարատե ճամբորդութիւնից:

— Կիրակի, սեպտեմբերի 20-ին, վեհափառ բարեհաճեց եպիսկոպոսութեան բարձր աստիճանը շրջնորհել Զմիւռնիոյ առաջնորդ Տ. Ներսէս Ապունեան եւ Կ. Պօլսոյ պատրիարքական փոխանորդ Տ. Գաբրիէլ Ճէվահիրճեան վարդապետներին: Պատարագիչը Բարթողիմէոս վարդապետ Փէորգ:

— Ինծի համար հոգ մ'ընէք, որովհետեւ ես անանկ շատ վախցող մէկը չեմ, եթէ չէք հաւատարմաբար կարգադրէք եւ պիտի տեսնէք թէ շատ հանգարտ կը զարնէ:

Ու նորէն գլուխը ետին դարձնելով, ձախ ձեռքը Տօքթօնին երկնցուց: Այն ատեն միայն հասկցաւ Տօքթօնը թէ ինչո՞ւ այդ կինը իր բոլոր շարժումներուն մէջ ձախ ձեռքը կը գործածէր եւ կայծակի արագութեամբ մտքէն բան մը անցաւ: Այո, անգամ մը տեսած էր այս ձեռքը, ինչպէս նաեւ աջն ալ, որ շատոնց կը պակսէր իր տեղէն, հոն ուր ընութիւնը զետեղած էր: Ինքն էր այն արուեստագէտը որ թարգմանեց ընութեան այդ շրջնորդը: — Գիտկանցիկով անոր աջ ձեռքը: Անցեալին մշտնջերուն մէջէն վերջուշունին կ'ընէր, մտքին առջեւ կը ներկայանար Տիւրքթօն Պարթաւ պարահանդէսը, այն գիշերային երթեւեկութիւնը ձմրան ցուրտ գիշերուան մը մէջ, խորհրդաւոր տունը, անոնի գործողութիւնը, այն առեղծուածը որ այնչափ ժամանակէ ի վեր կ'աշխատէր լուծելու եւ զոր շատ տարիներ անցնելով մոռցած էր: Արդեօք այս տեղ էր անոր լուծուելու բանալին: Զէր կարծեք թէ հոս ըլլայ, քանի որ կոմսուհին գէմքը չէր ցուցներ թէ ինչ ինչատակները նորոգել ուզէ:

Թ. Գ. Հիւնդեան (Շարունակելի)

եանն էր: Այս տեղ շատ եւ շատերը կարծում էին եւ համոզուած իսկ էին, որ Ս. Էջմիածնի միաբան արժանաւոր վարդապետներից գէթ այս անգամ կ'արժանանան այդ բարձր աստիճանին: Հաւանական է, որ շուտով եպիսկոպոսական ձեռնադրութիւն լինի յատկապէս վանքի միաբաններից: Այժմ Էջմիածնի միաբանութիւնը թէ վանքում եւ թէ դուրսը ունի ընդամենը ինքն եպիսկոպոս: Մինչդեռ մօտիկ անցեալներում դրանց թիւը, ինչպէս հաստատ աղբիւրներից լսեցի, եղել է 18-ը:

Շուշուց. — Կոնստանտնուպոլիսի վեց բոլոր այն տիրացուներին, որոնց համար վեհափառից ձեռնադրութեան իրաւունք էր ստացել, ուղարկեց Երնջկու վանքը: Մեծ. ըրով արքայ. մօտ ձեռնադրուելու: Այս դէպքից խրախուսուած՝ Ա. դուլեայ եկեղեցու ժամկոչ եւ հարսանեայ խնդրակ Արսէնն էլ է դրուելու բարձրացրել քահանայանալու: . . .

— «Եղբայրական օգնութիւն» ժողովածուի խմբագրութիւնը մայրաքաղաքի թերթերի միջոցով յայտարարում է, որ ցարդ Կ. Պօլսի ուսաց դեսպանատանն ուղարկուած է 18,100 ր. 65 կ. վնասուած հայերին բաժանելու համար: Այդ գումարից 5,000 ր. ուղարկուած է յատկապէս առաջին ուսական որբանոցը հիմնելու 25 հայ որբերի համար՝ «Եղբայրական օգնութեան» նուիրաբերողների առնունով:

ԹԻՒՐԳԼԵՐԷ ՆԱՍԱՀԱԹ

Թիւրքլէրի վէ Թիւրքիայը փառնաթիւրիկէ թէշվիդ Խոհն պիր չօգ պէնտլէր վէ բէսալէլէր նէշր իթմիշ օլան Բըրէսնից նամ Ալլամա նիալը մուհարրիր, սոն հաֆթաւարտա «Մէմէտ Էթտին» իմզասը ալթընտա պիր բէսալէ տախի նէշր իթմիշ տիր:

Մէրգում Ալլամանիալը — Թիւրք մէղքիւր բէսալէսի Իլէ՝ Թիւրքլէրէ Էթրա գըթասընտան Անատոլու ճիհէթինէ չէքիմէք իշիւն նասա հաթ վէրիյօր. զիրա պու եօլլէ Թիւրքլէր պիր մէրքէլտէ թէճէմ միւ օլուպ, վիճուտլէրինի սիյա սէթ վէ միլլիյէթ նօգթաի նազաւընտա գաւիլէշտիրիլէր տէյօր: Վէ Անատոլուտան Բուվարը գալտըրուպ, Կիրիտտէքի իսլամարը օրայա նազլ իթմէլի իմիշ. բէզա Ալլամալուտարա Թիւրքիա էմիյէթ իտէպիլէճէկինտէն, Ալլամանիայա միւքէմմէլ իսթիգալիյէթ (ինքնա վարութիւն) վէրմէլլէ Ալլամանիայ վէ Մաքէթնիայը էլտէ սազաւյապիլէճէքտի, զիրա Ալլամալուտար Մաքէթնիատաքի Սլաւարը գապթարը ալթընտ ալապիլիլէր իմիշ վէ պու բէք իգթիլալը տէյօր, չուքի Սլաւար գուլթիլէշէրէք Բուսիանըն Սթանպուլը վէ պօղաղ:

լարը զապիթ իթմէսինէ հարտըմ
իտէպիլիլիւր տէյօր :

Սթանպօլ Ալմանիստա վերիւ-
մէսի լազըմ ըմըշ (°.) :

Պու թէքլիֆթար աճէլէ իճրա
իթմէք իչիւն Բրէսնից թիւրքլէրէ
նասաճաթ իտէյօր , վէ տէյօր «Է-
կէր թիւրքլէր իսթէրլէր իսէքի
քէնտի սէրպէստիլէթ ու միլլի-
յէթլէրի զայպ օլմասըն պու բըլա-
նը իճրա իթմէլի տիրէր » :

Քէզա մէրգուլ մուհարբիլ շու
էքէնարտա պուլընըյօր քի , էկէր
50 սէնէ էվլէլ թիւրքլէր Հէրսէք
վէ Պօսնայը Աւստրիայա թէրք
իթմիշ օլսալարտը , անլէր էվրո-
բա գըթմաընտաքի վիլայէթլէրի
տախի զայպ իթմիշ օլմայաճագ-
լար ըտը :

ԱՆԱՐՀԻՍՏԼԵՐ

Ա. Ռէյրըրըն իսքէնտէրիէտէն
ալտըր մալիմաթա պինաէն , օ-
լատա իթալիալը անարհիստլէր-
տէն 9 բէշի թուլթուլմըշ . պու-
լարըն պիրիսի գահվէճի օլուպ ,
եանընտան իքի պօմպա պուլընմըշ
պու պոմպալարըն պիրի խտիվ ի-
չիւն վէ տիկէրի իմբէրաթօր վիլ-
հէլմ իչիւն հազըրլանմըշ օլտըր
անլաշըմըշ . զիրա իմբէրաթօր եօլ-
ճըլըրընտա Մըսըրա տախի ուղ-
րայաճագտը , ֆագաթ պիլախէրէ
բլան թէպտիլ օլտըրընտան , ա-
նարհիստլէր տալի բէնտի բլան
լարըն տէկիշմիլլէր , վէ մէկքիւր
պօմպալարը Պաղէստինէ կէօթիւր-
մէք իչիւն մէրգուլ գահվէճի Եա-
ֆայա կիտէճէք օլան պիր վարօ-
ըն մէսուրընա ըըշվաթ վատ ի-
տէրէք պօմպալարը սանտըղլէնազլ
իթտիրմէք թէշէպիւսինտէ իմիշ :

Բուսիա , Սերպիա , Շուէտ վէ
Նորվէգիա հիւքիւմէթլէրի անար-
հիստլէրէ գարշը իթալիանըն թէք-
լիֆինի գապուլ իթմիշ օլուպ ,
թէճէմիւ օլընաճագ գօնֆէրանս-
տա աթիտէքի թէքլիֆլէրի իտէ-
ճէք իմիշ :

1. Անարհիստ կաղէթալարըն վէ
բէսալէլէրին թապ ունէշլինի գա-
թիէն մէնն իթմէք :

2. Վաթանլարը խարիճինտէ պու
լընան անարհիստլէրի թապի օլ-
տըրլարը հիւքիւմէթ թէսլիմ իթ-
մէք :

3. Ճանի հախօտ ճինայէթլէ
թէշէպպիւս իթմիշ օլանլարը տի-
վանը հարպտա մուհաքէմէ իթմէք :

ԿԻՐԻՏ

Պապը Ալի տէօրթ տէվլէթլէրին
իւլթիմաթօրնա ճէվապ վէրուպ ,
Կիրիտտէն ասքէրլէրին չէքիլմէ-
լէրի իչիւն էմր վէրիլմիշ օլտըրըն
վէ եալընը ատատա Սուլթանըն
հաքիլմիլլէթ հաքըրնա տէլիլ օլմագ
վիւն պիր նօղթատա թիւրք աս-

քէրի գալաճագընը պիլտիրմիշ տիր-
լիլլէր պուճա ճէվապլէն , թէք-
րար պիր նօթա իլէ իւլթիմաթօ-

մըն հէր պիր նօղթատընը պիլա
իսթիսնա վէ աճէլէթլէն գապուլ
իթմէկէ Պապը Ալի պօրճու օլ-
տըրընը պիլտիրտիլէր : Պուճա
էվլէլ Սուլթան մէճլիսի վիւքէ-
լայը թէճէմիւ իթմիշ օլտարագ ,
Կիրիտէ Մըսըր կիպի պիր սէր
գօմիսէր թային օլընմասը իչիւն
տէօրթ տէվլէթլէրէ թէքլիֆ իտիլ-
մէսինի թալիթը գարարն ալմըշ-
լար ըտը :

Տիկէր թարաֆտան Բուսիա
Բրէնս Եօրկիի թային իթմէք էք-
քիարընտան կէրի տուրմայօր վէ
2—3 ալ սօնրա պու թէքլիֆ եէ-
նիտէն մէյտանա աթըլմասը մի-
նասիպ կէօրիւմիւշ տիր :

Էլան Պապը Ալինին գալաճագ
եօլը արամասը իւգէրինէ , իգթի-
զաի հալ թիւրքլէրի ճէպրէն ա-
տատան չըգարմագ իչիւն նէ գա-
գար էվրօրա ասքէրի լազըմ օլա-
ճաղընը տէօրթ տէվլէթլէր ալի-
րալլարա սիւվալ իթմիշլէր վէ օն-
լարըն էքքիարընը սօրմըշլար :

ՅԻՄՆՍՍ

—Տրէյֆիւսին մահուտ տալա-
նը եէնիտէն պագըրաճաղը սէպէպ-
լէ ֆրանսըզ գապիթլէրին վէ փէ-
նէրալլարըն հիւքիւմէթի հազըրէ-
տէն խօշնուտ գալմամըշ օլտըր-
լարը մալիմաթը . գապիթլէր տա-
վայը եէնիտէն պագմագ օր-
տունըն նամուսընը իլիլալ իթմէք
տիր , տէյօրլար . վէ բրօթէսթ ի-
տիյօրլար : Պապը շայէալարա վէ
կաղէթալարա կէօրէ , գապիթլէր
կիպի գօմիթէ թէշքիլ իթմիշլէր
վէ իմբէրաթօրլըզ իլան իթմէք
իսթէրլէր իմիշ . հատտա հիւքիւ-
մէթ մէմուրլարը Մ. Պրիզոնա կի-
տուպ , պէօյիւք գապիթլէրտէն
իքի քիլինին Բրէնս վիգթօր Նա-
բօլիօնլէ մուխալէրաթտա օլտը-
րընը պիլտիրմիշլէր տիր . հիւ-
քիւմէթ պու շայէաթա էհէմիլ-
յէթ վէրմէք իսթմէյօր :

Էհալինին վէ իշճիլէրին նիւմա-
լիշի տէվաթ իտէյօր :

Տրէյֆիւսին Տալապընը Միւտ-
տաի ումուլի իթհամ մէճլիսինէ
(ամբաստանիչ առեան) իհալէ իթտի-
թաւըն էքքիարընա պինաէն
գապիթլէրին հարէքէթլէրինտէն
տօլայը էսասըզ հալաթիլէր նէշը
օլընմագլէ գարըշըգըրա սէպէպի-
յէթ վէրիլիյօր :

Բարիսին պաղը մահէլլէրինտէ
իհթիյաթ իչիւն ասքէր պէքլէյօր :

ԻՄԲԵՐԱԹՕՐ ՎԻԼՀԵԼՄ

Ս Է Յ Ա Հ Ա Թ Տ Ա

Ալմանիա իմբէրաթօրը վէ իմբէ-
րաթօրիցասը հոկտ. 1 տէ վէնէ :

տիկէ նէթիշուպ , իթալիա գրա-
լընտան , գրալիցպսընտան վէ նա-
զըրլարտան գապուլ օլընարլար ,
վէ եէվմի մէկքիւրտէ գրալ վէ գը-
րալիցա միսաֆիլիլէրինի Հօնկնցօ-
լէր վարօրընա գատար կէօթիւ-
րիւպ , բէնտիլէրի վէնէտիկէ ալ-
տէթ իթտիլէր ,

Իմբէրաթօր վէ իմբէրաթօրիցա
բազար էրթէսի կիւնիւ Չանագգա-
լէյէ եէթիշուպ , օրատա Սուլթա-
նըն եօլմամըշ օլտըրը վարօրա նազլ
օլընարագ տիր Սթանպօլա վասըլ
օլմուշ օլաճագլար :

ՄԻԻԹԵՆԵՎ ՎԻԵ

—Մըսըր Խըտիվի Ապպաս Հիւ-
մի բաշա էվլէլէր բազար էրթէսի
կիւնիւ պիրաթէրի իլէ Սթանպօլ-
տան մուֆարէքէք իթմիշ տիր :

—Աւստրիանըն վիւքէլա ըշիսի
Մէճլիսի մէպուսանտա պէյան իթ-
տիքի , Աւստրո — Հունգարիանըն
հարպիլէ վէ պահրիլէ նէգարէթ-
լէրինտէ թէքի սիլաշ իչիւն Չա-
ըն թէքլիֆի մէվաթէթլէ գապուլ
օլընմըշ վէ պու խուսուստա թէ-
ճէմիւ օլընաճագ գօնֆէրանսա Ա-
լտտրիա տախի իշթիւրաք իտէ-
ճէք վէ պիլիւն գուվլէթիլէ մէ-
սէլէնին պաշա չըգմասընա չալըշա-
ճաղը Բուս հիւքիւմէթինէ պիլ-
տիրմիշ տիր :

—Տանիմարգանըն Լուիզա գրա-
լիցանըն ճէնապէ ալայընտա Բու-
սիա իմբէրաթօրը , Եունան վէ
Շուէտ գրալլարը վէ գրալիցալարը
հազըր պուլընտըլար :

—Բուս խարիճիլէ նազըրը Գօնթ
Մուրալիէթ Բարիսէ կիթմիշ վէ
Յրանսա խարիճիլէ նազըրը Մ.
Տէքաթ իլէ ուզուն միւլագաթտա
պուլընմըշ օլտըրընը Բարիստէն
պա թէլէկրաֆ պիլտիրիյօրլար :

—Չար Լիվաթիայա կիթմիշ օ-
լարագ , Գօնթ Մուրալիէթին հոկ-
17 տէ եանընա կիթմէսինիէմը
իթտի :

—Սաատէթտին բաշա Պէրանա-
յա եէթիշմիշ , իսթիլալտա մէտ-
իւլի օլանլարը ճէգալայաճագ վէ
ըրզընա թօգանըմըշ օլան զըզըն
վալիտէյինիէ թարղիլէ վէ իգթի-
ֆա վէրէճէք իմիշ :

ՏԵՂԱԿԱՆ

—Տէր Մարտիրոս հօր հրաւէ-
րին համեմատ կիւրակէ առաւօտ
բազարիս Աղդ . վարժարանին մէջ
միայն 1/4 հոգի հաւաքուեցան և
նոր թաղ . խորհուրդոյ մը ընտ-
րուեցան համար ընտրողական ժո-
ղով կազմեցին :

—Տիար Նաթան Պէյ Ամիրխան-
եան շաբաթ իրիկուն նուագահան-
դէս մը տուաւ Սաէտինէնիէի սը-
րահին մէջ . Հայ և Պուլկար բա-
ւական բազմութիւն մը կար . բայց
ոչ մի հայկական կամ պուլկարա-
կան կտոր չէր հաճած հիւրընկալել

իւր ծրագրին մէջ , այս ալ գարա-
վիլիկ նորոճեալ իւն կամ ծալ-
րայիղ օտարաժողովուն կարելի է
համարել :

ՉԱՍԻՐԷ ԲԻԱՅԱՍԻՐ

Վառնա , 2 Հոկտեմբեր

Պուլկար
Վալոն , լիպրա 55-58 հէք 9.20-8.90 ֆր
Արապա , 55-60 հէքթ. 9-11.40 :

Արապ
Լիպրա 42-50 հէքթ. 5.40-5.60 ֆր
Ֆասուլիս
100 օգ. 18-22 ֆր. մալընա կէօրէ :

Եուլաթ
Արապա 20-25. ֆիլաթ 5-5.30 ֆր.

Տարր
Արապա 5-6. լիպրա 58-60. ֆի. 4.60-5.
Կիւնտէ 150-200 արապա վէ 25-30

վալոն պուլկար , 70-80 արապա ար-
բա կէլմէքտէ տիր
Ֆասուլիս 8-10 արապա
Արապա մուսալէլիսի Նարօլէօն 21 ֆր.
հիսապը իլէ :

ԺՈՂՈՎՐԴԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ

Յրդ. քաղ. քիւ 66.

Պարսկական հիւպոստատանի նիւնսը

Այս հաստատութիւնը , որ տա-
րիէ մը ի վեր ճրիագր գիրքեր
կը մատակարարէր ընթերցասէր-
ներու , նոր գիրքերով ճիւղացած
կը շարունակէ բաց փալ :

Ամէն երկուշաբթի և կիրակի
ժամը 1—5 արանց և կանանց հա-
մար . իսկ հինգշաբթի կէս օրէ
ետքը , միմիայն կանանց համար :

Ա. Զ. Դ

Պուլկարական կիւմնապիտին հին.
գիրքով կարգը աւարտած երիտա-
սարդ մը կը փափաքի վաճառա-
տան մը մէջ համեստ վարձքով
պաշտօն մը ստանձնել :

Դիմել իրաւունքի խմբագրա-
տունը :

ՍՈՒՅԻՄ ԻԼԱՆ

ԱՐԹԷՉ ԳՈՒՅՈՒՍԸ

Պագճէ , աշխանէ վէ սայիր հէր
պիր մահէլտէ , հէր նէ տէրինիլի-
տէ իգթիլա իտէր իսէ պրկու ու-
սուլի իլէ սու գուլուսը աշըլըք ,
պինալարա ասլա գարուր վէ նէմ-
լիք վէրմէզ : Պու գուլուսարա գաւ-
վէթիլ վէ տայանըրը թուլուկա-
լար գօյուլուպ , սէնէլէրճէ պօղու-
մագսըզըն իսթիմալ օլընըլար :
Սու չէքմէք բէք գօլայ օլուպ , իր
վէ գօֆա իգթիլա իթմէզ :

Ֆիլաթլար գայէթ ուլկուն .
թաֆսիլաթլը իգահաթ ալմագ ի-
չիւն Տէմիրճի Հաճի Տիգրան Ա-
ւագիանըն տիւքիւնընա միւրա-
ճաաթ իթմէլի : 5-10

ՎԱՐՁՈՒ ԽԱՆՈՒԹ

Ա. Թաղ «Քնեազաքա» փողո-
ցին մէջ Տիար Թօմա Տիմիթրօֆի
400 թիւ տունին տալը գտնուող
խանութը վարձու կը տրուի : Փա-
փաքողները թող դիմեն տանտի-
րոյն : 7-9

Отговорникъ М. Сконовъ
Печатница „Взаимность“—Варна